

ՄԵՐ ԶԱՄՈՒԽՆՈՒԹԻՒՆ \* )

Այժմ դառնանք միւս դէպքը քննելու եթէ Արտաւագդ Մամիկոնեանն էր, որ իւր դուստրը Շաւասսպ Արծրունուն կին տուաւ, ապա ուրեմն նորա որդի Վասակն էր, որ իւր դուստրը կին տուաւ Մեհենդակ Ռշտունու որդի Տաճատին Խոսրով Բ.-ի ժամանակ Օշականի կոռուին յիշում են Մեհենդակ և Գարեգին Ռշտունիք «Նիդակակակիցք զօրավարին Հայոց» Արտաւագդի որդի Վաչէի ։ Բայց Խոսրով Բ.-ի յաջորդ Տիրանի ժամանակ, ինչպէս վերել տեսանք, Ռշտունիք էլ ջնջուեցան և մնաց միակ «Ճետը», «Տաճատ որդի Մեհենդակայ Ռշտունւոյ»։ ուստի յետոյ Արշակ Բ.-ի ժամանակ յիշուած Մեհենդակ Ռշտունին<sup>2</sup>—որ նոյն Մեհենդակ Ռշտունեաց Նահապետն է<sup>3</sup>, որովհետեւ Մեսրով Երէցն ևս այս Մեհենդին կոչում է Մեհենդակ<sup>4</sup>—միենոյն անձը չէ, այլ Տաճատի որդին, որ իւր պապի անունով է կոչուել, ինչպէս որ շատ սովորական է Հայոց մէջ։ իսկ էլ աւելի ուշ յիշում է մի Գարեգին Ռշտունի ևս Արշակ Բ.-ի թագաւորութեան վերջերին, ամուսնացած<sup>5</sup> և Մանուելի ժամանակ սպանուած<sup>6</sup>։

Արդ այս Գարեգինը, որ Մամիկոնեանց փեսայ էր, չէ կարող ի հարկէ Խոսրով Բ.-ի ժամանակ յիշուած Գարեգինը լինել, քանի որ նորա յաջորդի Տիրանի ժամանակ բոլոր Ռշտունիք կոտորուեցան, բացի Տաճատից, որի որդին միայն կարող է լինել Մամիկոնեանց փեսայ Գարեգինը, կամ շատ շատ, դուցէ, թոռը Այս Գարեգինի

\* ) Տես Արարատ օդոստոս, էջ 651—669։

1. Բուզ. Դ, է, էջ 16—17։

2. Բուզ. Դ, դ, էջ 72. Սոփերք Հայկ. Զ, դ, էջ 25։


3. Բուզ. Դ, Ժա, էջ 105։ Վենետիկ 1889։

4. Սոփերք Հայկ. Զ, ը, էջ 52։

5. Բուզ. Դ, ծթ, էջ 183։

6. Բուզ. Ե, լէ, էջ 250։


համար Բուղանդարանն ասում է. «իսկ Վահանն ունէր մի քոյրաթիւ. Մամիկոնեան տոհմից, Վարդանայ քոյր Համազասպուհին. և նա Ռշտունեաց գտւառի տէր Գարեգինի կինն էր». մի տեղեկութիւն որ հաստատում է և մի այլ վկայութեամբ, որտեղ Համազասպ-Համազասպէ-Համազասպեանը կոչւում է այս Գարեգինի «աներ»՝ աներձագ և Համազասպուհին նորա քոյր։ Մենք քաջանց վէպում քոյրաթիւ՝ բառը բացատրել ենք ցոյց տալով, որ Վահանը խորթ եղբայր էր, այսինք ջոկ մօրից, իսկ Վարդանն ու Վասակը, այս վկայութեամբ և Համազասպը հարազատ եղբայրներ էին։ Եւ ուրեմն հետեւում է որ Վասակը իւր դուստրը տալով Մեհենդակի որդի Տաճատին, հարազատ քոյրն էլ տուել է իւր թոռ, Տաճատի որդի, Գարեգին Ռշտունուն։ Ահա այդ ճիւղազրութիւնը



Այսպիսի օրինակ չունի Քաջանց տան վէպը. բայց այս դէպքը յարենման արքայական և հայրապետական տան միջև հաստատուած մերձամուսնական կապին Խոսրով Բ.-ի կողակի որդի Տիրանը իւր դուստրը կին տալով Վաթանէս կաթուղիկոսի որդի Յուսիկ կաթուղիկոսին, սորա որդոց Պապին և Աթանազինէսին, ուրեմն իւր թոռներին աղջկայ կողմից, կին է տալիս իւր քոյրերը՝ Վա-

1. Պատմագրութեան մէջ միայն Բուղանդն ունի այս բառը. մի օրինակ ևս Հայկազեան երկնատոր Բառգիրքը. քոյրաբիւ կոչւում էին բազմակնութեան շրջանում, գէթ Ֆ. դարում, մի հօրից, բայց տարբեր մայրերից, ծնուած զաւակները. արդեօք մի մօրից և տարբեր հայրերից ծնուածներն էլ այսպէս կոչւում էին, մութ է մնում, բայց շատ հաւանական։

քաղցուիստ և Բամբիշն. ճիշտ ինչպէս Վասակ Մամիկոն-  
եանը, ահա.



Ամուսնութեան այսպիսի մերձաւոր կապերի օրինակներ հաւանօրէն շատ են եղել, որ մեր քրիստոնեայ պատմագիրները պատահարար միայն աւանդում են. գուցէ թէ աւելի մերձաւոր աստիճանի ամուսնական կապեր կային, մանաւանդ ուրացողների միջև. զոնեա մեր բախտակից վրաց ազգի մէջ նոյն իսկ մի դար յետոյ մի պէտկալի օրինակ տեսնում ենք: Մեր ս. Վարդան զօրավարի վեսայ Վազգէն Բղեշիը և Մարդկային երկիւղից, մանաւանդ՝ թէ կամայ իւր դստեր համար ընդունեց զրադաշտական մոգութեան օրէնքը». ուստի նորա կին Շուշանիկը «Յանդիմանում էր նորան և առաջն էր զնում Աստուծոյ արդար գատաստանը նորա վրայ, որ այսպիսի բաներ են դորձում. որին չհաւանելով [Վազգէնը] աւելի ևս բորբոքւում և բարկանում էր յաղազս յանդիմանութեան և անհաւանութեան անկողոյն»<sup>1</sup>: Այսպէս էլ Պարսից արքայ մոլի զրադաշտական Յազկերտ Բ.-ը նոյնպէս կին էր առել իւր հարազատ դուստրը<sup>2</sup>. իսկ կաւատ Բ. Շերոյէն 628-ին կին առաւ իւր հօր Խոսրով Պարուէզի կանանց<sup>3</sup>: Հայաստանի հարաւարեւմուտքում թաղաւորներից

1. Սովերք Հայկ. Թ, էջ 50—51, Վենետիկ 1855:

2. G. Hoffmann, Auszüge aus den Syrischen Akten persischer Märtyrer X, էջ 50, Leipzig 1880:—Th. Noeldeke, Tabari, էջ 114, ծանօթ. I. Leyden 1879:

3. Th. Nöldeke, Tabari, էջ 384, ծանօթ. I. Leyden 1879:

ոմանք պատկուել են իրենց քոյրերի հետ, ինչպէս և Հայաստանի հիւսիս-արևմուտքում Պոհառոսի թագաւոր Միհրը դատ եւպատորը կարգուել է իւր քոյր Լաւողիկէ հետ<sup>1</sup>: Այս բոլոր օրինակներից յետոյ թող զարմանալի չերեայ, որ մեր Տիգրան Բ. Մեծի թուան թոռ Հայոց թագաւոր Տիգրանն ևս ա. դարում ամուսնացել էր իւր քոյր երատոյի հետ<sup>2</sup>:

Մեր Դ. դարի մերձամուսնութեան կտողերը դեռ պէտք է առաջադիմութիւն համարել այս տեսակէտով, երբ ի նկատի առնենք, որ Պարսկաստանի և Հնդկաստանի այս օրուայ գերը զրադաշտականների նախորդները Թ. դարում տակաւին ազգապղծութեամբ շաղախուած էին: Էլգադ-հաղանի հրէան խօսելով Մարաստանի և Պարսկաստանի կողմերում ապրող իւր հայրենակիցների մասին, ասում է, թէ նոքա ապրում էին այնպիսի ժողովուրդների հետ, որոնք երկրպագում էին կրակին և ամուսնանում են իւրենց մայրերի, դուստրների և քոյրերի հետ և խօսում են պարսկերէն-քեդարերէն, այսինքն թուրք-թաթարերէն<sup>3</sup>:

Այս վկայութիւններից արդէն ընդհմարւում է, որ զրադաշտական երկրներում տեղի ունի այս աստիճանի մերձամուսնութիւն, ուստի և զարմանալի չէ, երբ Յազկերտ Բ.-ը Ե. դարում հրամայում էր Հայերին «Խստերք հարանց [հարց] իինիցին, և քորք եղբարց. մարք մի եւ ցեն յորդւոց, այլ և թոռունք ելցեն յանկողինս հա-

1. Dolens et A. Katch, Histoire des Anciens Arméniens IV, էջ 113, 114, Genève 1907:

2. Կ. Տակիսոս, Տարեգիրք Բ, § Գ—Դ, էջ 64—65, Վենետիկ 1872. հմմտ. Ա. Մ. Դարագաշեան, Քննակ. պատմ. Հայոց Բ. Ժ, § 7, էջ 187—188, Թիֆլիս 1895,

3. Ե. Թ. Մալլերի, Древности Восточного, Труды Восточн. Комиссии, томъ II, Выпукъ III, էջ 161, Москва 1903:—Թ. Նէոլդեկէն «Կիդարացի» կոչում է Հեփթադներին՝ Հայոց Թեստալացոց, սպիտակ Հոներին՝ Հայոց Թուշաններին: Այս ժողովրդի մասցորդները երկում են 700 թուականներին Օքսոսից հարաւ և հիւսիս (Tabari, էջ 115, ծանօթ 2. էջ 168, ծանօթ. 6):

լուց՝<sup>1</sup> Եւ Պարսկաստանի ներքին կեանքի քաջ մասնագէտ Arthur Christensen-ը հաստատում է այդ. «Պարսիկ ընտանիքների արիւնը մաքուր պահելու յատուկ հոգուր պատճառ դարձաւ, որ մերձաւոր ազգականների՝ եզրօր ու քրոջ, հօր ու դստեր, որդու և մօր ամուսնութիւնն իրար հետ կրօնով սրբագործուեց։ Այս կոչում է khwēd-hugh-das։ Արդէն Աքամենեանց միջն այսպիսի ամուսնական կապերն ընդհանրացած էին։ Աւեստան շատ անգամ այդ պատուիրում է<sup>2</sup>. իսկ դեռ էլ աւելի յահախ՝ պահեի աստուածաբանական դրականութիւնը։ Sāyast Nē-Sāyast գրքում (VIII, 8) օրինակ Nōsātī Burz-Mitrō մեկնիչի այս խօսքն է յիշատակւում թէ «Khwēdugh-das-ը ջնջում է մահացու մեղքերը»։ Այս՝ գերազոյն աստիճանն է փառաբանութեան։ Dēnkard գրուածքում (IX, 60, 2—3) ձերբագործները՝ սարակները մասնաւորապէս հրաւիրում են հետեւելու այս սովորութեան, որ երբեմն ունէին նախամարդիկ. և միենոյն գիրքը (IX, 41 հտեւ.) նկարագրում է աստուածային շուքը եղբօր քրոջ հետ ամուսնութեան, որ և զօրութիւն ունի գեեր հանելու<sup>3</sup>. Կան և բազմաթիւ օրինակներ, որոնք ցոյց են տալիս, որ Khwēdugh-das ը բաւականին սովորական էր Սասանեանց ժամանակ, որքան արքայական տան<sup>4</sup> այնքան էլ ազատանու և հոգեորականութեան մէջ, վահրամ Զորինը կին էր առել իւր

1. Եղիշէ, Պատմ. Վարդանանց, Բ, էջ 77, Թէոդոսիա 1861:

2. Wisp. III, 3. Vend. VIII Կյլն.

3. Այս խնդրի մասին տես West-ի պահեի բնագիրը էջ 389—430 և Cosartelli, Thil. relig. du Mazdeisme, էջ 149 հետեւ.

4. Բատ քրիստոնէական աղքիւրների Յազկերդ Բ.—ն ամուսնացած պիտի լինէր իւր դստեր հետ, որին յետոյ սպանած պիտի լինի,—Կաօս Padhaswersāh-ը, ըստ Թէոֆանի, Կաւատի և սորա դուստր Սամրիւկէի որդին էր (Th. Nöldeke Tabari, էջ 462): Մարքուարտը հակուած է հաւատալու որ նա աւելի շուտ Կաւատի և սորա առաջին կնոջ, որ և քոյլն էր, որդին էր (Erānsähr, I, էջ 279):

Քոյր Gurdinya-ն<sup>1</sup>, Միհրան Վշտասպը իւր քոյր Hazāra-waī-ը<sup>2</sup> և Ardā Virāf-ը, ասուած է, ամուսնացել էր իւր եօթը քոյրերի հետ<sup>3</sup> Առ մի այսպիսի հաստատութիւն կարողացել է զոյութիւն ունենալ երկար դարերի ընթացքում, հովանաւորուած կրօնից, առանց մի վնասակար ազգեցութիւն ունենալու ժողովրդի վրայ<sup>4</sup>, թուում է, որ այս ապացուցանում է թէ այն առողջապահական հիմունքները, որոնցով ըստ քրիստոնէական և մահմէդական իրաւունքի ու բարոյականութեան ազգապղծութիւնը դասուած էր մեծ ոճիրների շարքը, սակաւ ինչ երեակայական են»<sup>5</sup>:

Զրադաշտական մերձամուսնութիւնից<sup>6</sup> հանած հեղինակի այս եզրակացութեան, որքան մեզ է յայտնի, այժմ մեան բժշկականութիւնը համաձայն չէ; Եթէ մի կողմ թողնենք ընտանեկան վարք ու բարքի և բարոյականութեան խնդիրը: Մեզ այստեղ կարեորն է թէ զրադաշտական կրօնը որքան տարածուած էր հեթանոս Հայաստանում: Երբ ի նկատի առնենք նախ մեր հեթանոսական աստուածութեանց անունները Արամազդ, Անահիտ, Միհր

1. Th. Nöldeke, Tabari, էջ 279:

2. Hoffmann, Auszüge, էջ 95:

3. Haug & West, Ardā Virāf—nāmagh, էջ 149:

4. Իրանցոց անկումն իսկապէս սկսուել է իսլամական դարշանանում:

5. Arthur Christensen, l'Empire des Sassanides, le Peuple, l'Etat, la Cour II, էջ 53, Copenhague 1907, Mémoires de l'Académie Royale des Sciences et des Lettres de Danemark, 7-me série, section des Lettres I, № 1:

6. Հաւանօրէն զրադաշտականութիւնը սրբագործել է միայն մերձամուսնութիւնը, քանի որ Պարսից մէջ զրադաշտականութիւնից էլ առաջ կար այդ երկոյթը: Մարդոնիոսը, որ Դարեհ Վշտասպեանի եղրօր որդին էր, կին էր առել Դարեհի, ուրեմն իւր հօրեղրօր: զուսոր Արտազոստրան. իսկ Դարեհը, յամենայն դէպս զրադաշտական եղած պիտի չլինէր, այլ Պարսից հնագոյն կրօնի հետևող (C. de Harlez, Avesta. chap. I, էջ IX—XVIII, Paris 1881):

և համշասպանդներինը՝ Սպանդարամէտ, Խորուտ և Մօ-  
րուտ, յետոյ զրադաշտական բազմակնութիւնը, որ կար  
ոչ միայն հեթանոս այլ և քրիստոնեայ Հայաստանում—  
ինչպէս յետոյ էլ կը տեսնենք—ապա և այն վարք ու բարքի  
և ընտանեկան սովորոյթները, որոնք ցարդ կան ժողովրդի  
մէջ և որոնք անտարակոյս զրադաշտական են—որքան էլ  
այս խնդիրը տակաւին կարօտ լինի մասնագիտական ու-  
սումնասիրութեան—այն ժամանակ այլնս տարակոյս չպի-  
տի մնայ թէ որ առտիճանի Հայաստանում խոր արմատ-  
ներ էր քցել զրադաշտականութիւնը, որին և կարելի է  
վերագրել Հայոց ոչ միայն մերձամուսնութիւնը, այլև  
բազմակնութիւնը քրիստոնէական շրջանում։

Այժմ դառնանք մեր վերե յիշուած մերձամուսնու-  
թեան օրինակներին։ Նախ դիտելու է, որ երբ Քաջանց  
տան վէպում ըստ № 2-ի հարտզատ քըոջ որդիք են իրար  
հասնում և ըստ № 3-ի Բահրը կին է իւր հօրաքըոջ որդու,  
այդ շատ բնական է տարիքի նկատմամբ, մինչդեռ Բու-  
զանդարանի վերոյիշեալ երկու դէպքում հասակի շատ  
խոշոր տարբերութիւն կայ, եթէ նոյն իսկ մի կողմ թող-  
նենք այժմեան տեսակէտով հասի-չհասի խնդիրը։ Այս  
պատճառով Ա. Գութշմիդի պէս մի աշխարհահռչակ և  
բանիքուն գիտնական յիշատակելով Յուսիկ կաթուղիկոսի՝  
Տիրան թագաւորի դստեր և նորա որդոց Տիրանի քոյրերի  
հետ ամուսնութիւնը, ասում է. «Յայտնապէս . . . շփոթ-  
մումը Տիրանի դուստրը և քոյրը տեղերը փոխել են» և  
հիմնուելով Ագաթանգեղոսի ժոմանակագրական և Բու-  
զանդարանի ցուցմունքների վրայ մինչև իսկ նոցա ծննդեան  
տարիներն է հաշւում-գտնում։ Միևնոյն կամ նման հա-  
շիւներ տնելով Մ. Օրմանեանը աւելացնում է հետևեալը.

1. Kleine Schriften III, էջ 413. Leipzig 1892 «Offenbar aber  
durch eine Verwechslung die Tochter und die Schwester die Plätze  
verwechselt». չմոռանանք որ բնագըում քոյրեր են յիշում, մինչ-  
դեռ Գութշմիդը ենլի է թարգմանում։

«Այսպիսի ազգակցութիւն մը բոլորովին անհնար կերկի, ոչ թէ ճիւղահամարի դժուարութեանց համար, որուն ժամանակին արքունիքը բնաւ մտազրութիւն դարձուցած չէ, այլ նոյն իսկ բնական անկապակցութեան և տարիներուն անյարմարութեան համար, որ Պատ և Աթանաղինէ, որ Տիրանի թոռներն իրենց մեծ մօր [տատ] տեղը եղող կիւներուն, այսինքն իրենց մեծ հօր [պատ] քոյրերուն հետ կարենան ամուսնանալ: Անձշառութիւն մը կայ յայտնապէս, այլ ուղղելու համար բնաւ նշան մը չենք գտներ, և միայն ենթազրութեամբ կրնանք ըսել թէ Վարազդուխտ և Բամբիշ Տիրանի եղրօր կամ քրոջ գաւակներ եղած ըլլան, առանց հարազատ քոյրեր ալ լինելու»<sup>1:</sup>

Նախ և առաջ բանաւոր չէ Խորենացու տուեալների և կամ Աղաթանգեղոսի ժամանակազրութեան վրայ հիմնուելով հակասութիւններ և կամ անամանակութիւններ գտնել Բուզանդի մէջ, տպա ի նկատի պէտք է առնել, որ մեզ ոչ միայն տակաւին ճիշտ յայտնի չէ Տրդատի ծընուղը, այլ և վիճելի է թագաւորութեան սկիզբը, մանաւանդ թէ անյայտ և վախճանը, ուստի և անպատեհ Խորենացու ժամանակազրութեամբ որոշել Բուզանդինը, մանաւանդ որ վերջինս, իբրև վէպ, ժամանակազրութիւն չունի: Վերջապէս պէտք է ասել ուրեմն որ այս հաշիւները տարակուսական և առաձգական են, մանաւանդ ամուսնական կապերի վերաբերմամբ: Միթէ քիչ են պատահում անհաւատալի կապեր և այժմ մեր ժամանակ, և միթէ մեր ժամանակով կարող ենք չափել և հասկանալ մեր անցեալը: Զպէտք է մոռանանք, որ կան դէպքեր, որ մեզ այսօր պարզ չեն, որովհետեւ հանգամանքները մեզ անյայտ են և կամ դժուար է լինում պատկերացնել: Այստեղ՝ որտեղ քաղաքական, ցեղական և այլ մեզ անծանօթ հաշիւներ կան, և իրողութիւններ, փաստեր ու ասլացոյցներ պակասում են, պէտք է ասենք non liquet: Ուստի և

1 Զորբորդ դարու Հայ Եկեղեց. էջ 31. Արտատու. «Լումայ» հանդ. 1901, Թիֆլիս:

մի կողմ թողնելով այս ենթադրական հսարաւորութիւնները, դառնանք խնդրի քննութեան:

Գութշմիդի ասելով իբրև թէ այստեղ շփոթմամբ «դուստր» և «քոյր» տեղերը փոխել են: Բայց միթէ շփոթումը հնարաւորէ, երբ մի կողմից Տիրանը իւր մի դուստընէ տալիս Յուսիկին, իսկ սորա որդոց կամ իւր թոռներին երկու քոյրը, յիշուած անուն անուն՝ Վարագդուխտ և Բամբիշն, մէկը՝ Պապին միւսն՝ Աթանագինէսին—երկու անձի, այսպիսի շփոթմունք անհասկանալի է մնում: Իսկ Մ. Օրմանեանի այն նկատողութիւնը իբրև թէ Վարագդուխտը և Բամբիշը Տիրանի եղբօր ազջիկներ լինէին, առանց հարազատ քոյրեր էլ լինելու, արդէն կամայական և անհիմն է: Սակայն թող խօսի ինքը Յուզանդը, որ ճիշտ է, մի անգամ է միայն ասում թէ «արքայորդի Տիրանը իւր դուստըն կնութեան տուաւ Վրթանէսի որդի Յուսիկին<sup>1</sup>, բայց այնքան մանրամասն և հանգամանօրէն է պատմում, որ դժուար թէ կարելի լինի Բուզանդարանի կողմից շփոթութիւն կամ անձշտութիւն ենթադրել, մասնաւանդ եթէ ի նկատի առնենք միւս դէպքը: Տիրանի քոյրերի իւր թոռների, Յուսիկի որդոց, հետ ամուսնալու մասին Բուզանդարանը երեք անգամ տարբեր տեղերում և առթիւ յիշում է. «Պապ և Աթանագինէս . . . կին առան թագաւորի քոյրերը . . . Պապի կնոջ անունն էր Վարագդուխտ . . . Աթանագինի կնոջ անունը Բամբիշն», Ներսէսի մայրը<sup>2</sup>. ապա «Բայց Աթանագինին Բամբիշից, թագաւորի քրոջից, մնաց որդի, անունը Ներսէս»<sup>3</sup> և վերջապէս «Բամբիշ . . . քոյր արքային Տիրանայ»<sup>4</sup>: Աննշան չէ և այն հանգամանքը, որ Մեսրոպ երէցը, որի դիսաւոր, եթէ չասեմ միակ, աղբիւրը Բուզանդարանն է, կամ գոնեա այս երկուսի ամենամեծ մասը միւնոյն աղբիւրից է, ասում է «Թագաւորեց Արշակը իւր հօր Տիրանի փոխանակ.

1. Բուզ. Գ. հ, էջ 10—12:

2. Բուզ. Գ. ժե, 44:

3. Բուզ. Գ, ժթ, 49:

4. Բուզ. Պ, զ, 69:

և ներսէսը եկաւ եղաւ սենեկապետ նորա բոլոր գանձերի վրայ, վասն զի Արշակ թագաւորի հօրաքեռ՝ հորաքրոջ որդին էր»<sup>1</sup>:

Բուզանդն ուրեմն լաւ գիտի թէ ինչ է ասում, այլ խնդիր է թէ նա է սխալում թէ իւր քննադատները, որոնց առարկութիւններից էականը՝ թուական հաշիւները խախուտ են, ինչպես վերևը դիտեցինք. ոսկայն կարծես հիմնաւոր է, ըստ երևոյթին, Օրմանեանի «ընական կապակցութեան և տարիներու անյարմարութեան» դիտողութիւնը:

Ցոյց տալու համար որ Օրմանեանի այս առարկութիւնն էլ հիմնաւոր չէ. նախ որոշենք մարդ ու կնոջ սեռական գործունէութեան սկիզբն ու վերջը: Արբունքը [pubertas] «կանացն է 13—15 տարիքը, իսկ տղամարդկանցը 14—16: Տաք կլիմայում աղջիկը սեռական հասունութեան է համում արդէն 8 տարեկան, և 45—50 տարիների մօտերքը դաշտոնի կտրուելով՝ գաղարում է կնոջ ծննդաբերութիւնը (anni climacterisi, involuto), իսկ տղամարդկանց սերմի կազմուելը նկատում է մինչեւ խոր ծնրութիւն»<sup>2</sup>: Յայտնի բնախօս Լանդուայի այս գիտական հետազոտութեան արդիւնքին համաձայն են և ուրիշները: Եասինսկին խօսելով կանացն մասին՝ ասում է. «Սեռական հասունութեան ժամանակը սովորաբար լինում է 14 կամ 15 տարիքը, թէև խառնուածքի տարբերութեանց պատճառով՝ ոմանց դաշտանն աւելի վաղ է սկսում, ուրիշներին աւելի ուշ. բայց տարբերութիւնն ընդհանրապէս աննշան է: Որքան աւելի տաք է կլիման, այնքան աւելի վաղ վրայ է հասնում սեռական հասունութիւնը. այսպէս օրինակ Կովկասում՝ սեռական հասութիւնը համարեա երկու տարով աւելի վաղ է սկսում, քան մեզնում՝ Ռուսաստանում. իսկ ծննդաբերութեան ունակութիւնը՝ վեր-

1. Առփերք հայկականք, Զ, թ, էջ 14—15, Վենետիկ 1853:

2. Dr L. Landois, учебникъ физиологии человѣка, перевѣв. В. Я. Дайлевскаго, § 436, էջ 1144—1145, Харковъ 1898:

ջանում է սովորաբար մեր կլիմայում 45—50 տարիների միջև, թեպէտե այստեղ էլ խառնուածքի առանձնայատկութիւնները սակաւ ինչ ազդեցութիւն սւնեն: Շատ անգամ եղել են դէպքեր, որ կանայք վաթսուն և էլ աւելի տարիքաւոր հասակում երեխայ են բերել, և հետեւաբար նոցա դաշտանը մինչև այդ տարիքը չէր կարուել<sup>1:</sup>

Մի կողմ թողնելով և այն հանգամանքը, որ ֆիզիքական և մտաւոր զարգացման ժամանակ ևս թէ տղամարդի և թէ կին արմատի արրունքն աւելի վաղ է սկսւում, և ի նկատի չառնելով նոյն խոկ և այն, որ կովկասում, ուրեմն կարելի է ասել և բովանդակ հայաստանում աւելի վաղ են սկսւում,—Բաղէշի վիլայէթի ինչպէս մահմեղական այնպէս և հայ աղջիկները ամուսնանում են 12—13, երբեմն մինչև խոկ 11 տարեկան<sup>2:</sup>—, ես կընդունեմ մեր այս խնդրի՝ ծննդաբերութեան սկզբնաւորութեան համար 13 տարիքի փոխարէն 15-ը, որով և ի նկատի պիտի չառնել սերունդների միջև 9—12 ամիսը: Այս 15 թիւը յարմար է, իրեւ կըոր թիւ, և ամենաբարձր թիւն տարիքն է կինարմատի, բայց և տղամարդի համար, մասնաւանդ որ պատմութիւնից էլ օրինակներ ունենք: Լեռն Բ. Մեծագործի եղբօր Ռուբէն Բ.-ի դուստր Ալիճը նախ Սասնեցի Զորդուանէլի որդի Հեթումի կինն էր, ապա Անտիոքի գահիշան Ռեմունդի<sup>3:</sup>, որ «Դեռ ևս իրը շորերտասանամեաց էր»<sup>4:</sup> Յուսիկ կաթուղիկոսը 12 տարեկան՝ ամուսնական կեանքից հեռանալով հանդերձ դաւակներ ունեցաւ<sup>5:</sup>. Միիթար Գօղը 14 տարիքը «սերմանելու»

1. Դր. Մեծանութեան Վ. Յանչեսկացո, Անդրանիկ Ջենցիա, Մայ և Հիւն, էջ 31. Մոսկվա 1898:

2. V. Cuinet, Tous les pays d'Asie, Geographie... II, էջ 531, Paris 1892:

3. Սմբատ Գունդստապլ, Տարեգիրք, էջ 105, 108. Փարիզ 1859:

4. Ղ. Ալիշան, Սիսուան էջ 456:

5. Բուզ. Գ. և. 11—12 «Յերկոտասանամենից ի գեր առաքինանայր»:

կամ «որդեծնութեան հասակ» է ընդունում<sup>1</sup> և Ասի 1243—46-ի ժողովի է. կանոնն է. «փեսան պակաս չլինի 14 տարեկանից, և հարսը՝ տասներկուսից»<sup>2</sup>. իսկ սեռական դործունէութեան ունակութեան տարին կընդունեմ կնոջ համար ոչ թէ ամենավերջինը՝ 50 տարին, այլ ամենավաղը. որով կստանանք հետեւեալ աղիւսակը

Ծնունդ	1	2	3	4
	Տ	ա	ր	իր
Ա.	15			
Բ.	30	15—1		
Գ.	45	30—15—1	15—1	
Դ.	60	45—30—15—1	30—15—1	15—1

Եթէ մէկն ամուսնանոյ 15 տարեկան (Աղիւսակ Ա., 1) 30 տարեկան հասակում կարող է ունենալ 15—1 տարեկան զաւակներ [Բ 2], 45 տարեկան հասակում 30—15—1 տարեկան որդին [Գ 2] և 30 տարեկան որդուց թոռներ 15—1 տարեկան [Գ 3], իսկ 60 տարեկան կունենայ 45—30—15—1 տարեկան որդիք [Դ 2], այս 45 մինչև 30 տարեկան որդիներից 30—15—1 տարեկան թոռներ [Դ 3], իսկ 30 տարեկան թոռից մինչև 15 տարեկան ծոռներ [Դ 4]: Արդ միթէ 15 տարեկան թոռը [Գ 3] չի հասնի իւր 45 տարեկան պապի և կամ տատի [Գ 4] եղբայրներին կամ քոյրերին, որոնց թիւը կարող է շատ լինել: Աւելի պարզութեան համար առնենք Դ 4-ին ամենամեծը՝ 15 տարեկանը, որի պապի ու տատի եղբայրները կըլինին 30—

1. Դատաստանագիրք. Նախադրութիւն Ծ է, էջ 37—39, Վարդապապատ 1880:

2. Ե. վ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեց. իրաւունքը, Ա. էջ 453, Շուշի 1903:

15—1 տարեկան [Դ 2]. այստեղ կան և հասակակիցներ, որ հեշտութեամբ իրար կարող են առնել «քնական կապակցութեամբ» և առանց «տարիներու անյարմարութեան», աղջիկը իւր պապի կամ տատի եղբօրը և տղան իւր պապի կամ տատի քրոջը: Յազկերտ Բ-ի հրովարտակի այս խօսքը «Այլ և թոռունք եցեն յանկողինս հաւոց» անհնարին բան չէր այդ:

Եթէ ամուսնութեան տարին մի կամ երկու տարով նուազեցնենք կամ շատացնենք աղիւսակիս մէջ խոշոր փոփոխութիւն չի մտնիլ և դարձեալ չի հերքուիլ Դ 4-ի և Դ 2-ի սերունդների իրար առնելու հնարաւորութիւնը: Եւ որովհետեւ աղջիկը 15 տարեկանից ցած էլ է ամուսնանում, ինչպէս ցոյց է տալիս յատկապէս Սսոյ ժողովի որոշումը, իբրև սովորական և ցարդ շատ տարածուած սովորոյթ, ուստի եթէ ծունկերից և կամ պորտերից մէկը երկուսը աղջիկ ընդունենք այդ հնարաւորութիւնն աւելի մեծ հաւանականութիւն կունենայ:

Մոռանալու չէ, որ փոքրահասակ աղջիկների տարիքաւոր մարդկանց առնելը բազմակնութեան յատուկ երեսյթներից է. մինչև այսօր էլ սուլթանները տարեկան մի մատղահաս աղջիկ կին պիտի առնեն, թէս կարող է և հակառակը պատահել քաղաքական, շահաղիտական և մեզ անյայտ այլ պատճառով: Պարզ չէ թէ այս հանգամանքներից ո՞րն է, երբ Բուզանդարանն ասում է, Յուսիկն «Ամուսնանալիս քոնսողասուեցաւ թագաւորից իբրև մանուկ»<sup>1</sup>. մինչդեռ շահաղիտութեամբ է բացատրում Մ. Խորենացին, երբ Աշտիշատի ժողովի որոշումների մասին խօսելով՝ ասում է. «Ներսէս Մեծը «Նախարարների ցեղերից վերացնում է մերձաւորների խնամութիւնը, զոր վասն ազահելոյ սկզնական ազատութեանն առնէին»<sup>2</sup>: Այստեղ անշուշտ տեղի ունի և զրադաշտականութեան արիւնը մաքուր պահելու դաղափարը. մի կրօն որ դարերով Հայաստանում տիրող է եղել, Անշուշտ միևնոյն պատճառ-

1. Բուզ. Գ. ե, էջ 11:

2. Խորեն. Գ, ի, էջ 206. հմմտ. Բուզ. Դ, դ, էջ 77:

ներով մինչև իսկ է. դարում տեղի են ունեցել ազգականական մերձաւոր ամուսնութիւններ Աղուանից իշխանների, որոնց Ռւխտանէս կաթողիկոսի համար<sup>1</sup> (670—682) ասուած է. «Սա անիծեաց զնախարարս Աղուանից վասն ազգաշաղախ խառնակման, որք եղեն սատակեալք»<sup>2</sup>, որ կը կնուում է Ռւխտանէսի չորրորդ յաջորդ Տէր Միքայէլի ժամանակ «Անիծեալ զտեարս Աղուանից, որոց գերից ազգաց ծնունդս ամուսնացեալ էին, որ առժամացն հասեալ պատուհաս սպառեցան»:

Քաղաքական ամուսնութիւններ ես ամեն ժամանակ եղել են, երբ ոչ ազգակցութիւնը և ոչ էլ հասակի տարբերութիւնը առանձնապէս ի նկատի են տօնուել, ըաւական է միայն որ այդ իսպառ անհնարին չլինէր: Այսպէս էլ մեզնում ի հարկէ, Ահա Ռուբէն Ռայմոնդը և իւր մօրական պապ Ռուբէն Բ-ի եղբայրը Լիոն Բ. Մեծագործը առնում են երկու քոյր, Կիպրոսի Ամօրի թագաւորի աղջիկները Հելուիզ և Սպիլ, և, որքան պատմութեան ընթացքից է երկում<sup>3</sup>, Ռուբէն Ռայմոնդն առել է մեծը, իսկ Լիոն Բ-ը փոքրը, Ահա այդ ցանկը

Ռովբէն<sup>4</sup>

Կոստանդին<sup>5</sup>

Թորոս Ա. <sup>4.</sup> Լիոն Ա. <sup>4.</sup>

Թորոս Բ.<sup>1</sup> Ստեփանէ<sup>1</sup> = Բակուրանի քոյրը Մլեհ<sup>1</sup> Ռովբէն<sup>1</sup>.

Ռովբէն Բ.<sup>2</sup> = Զապէլէլ<sup>2</sup> Լիոն Բ.<sup>2</sup> = Սպիլ<sup>2</sup>

Ալիծ<sup>2</sup> = Ռեմոնդ Անտիոքացի<sup>2</sup>

Ռովբէն<sup>2</sup> = Հելուիզ<sup>2</sup>.

1. Մակար եպս. Բարխուդարեանց, Պատմ. Աղուանից հատոր Ա. լգ. էջ 108, բ, էջ 110, Վաղարշապատ 1902:

2. Մ. Կաղանկայտուացի, Բ, իդ, էջ 73. Պարիս 1860 = Գ, իզ, էջ — Մոսկվա 1860:

3. Ղ. Ալիշան, Սիսուան, Լիոն Մեծագործ, է, զ, էջ 510. Վենետիկ 1885:

1. Սամուէլ Անեցի Գ, էջ 204:—2. Սամ. Անեցի,  
Գ, էջ 208—209:

Եւ որովհետև այստեղ թոռը և իւր պապի եղբայրը  
քենակալ են, ուստի այդ միննոյն է թէ թոռն առնէր իւր  
պապի (կամ տատի) եղբօրը և կամ թէկուզ քրոջը: Այս  
պատմական իրողութեան մանրամասները թողնելով ըն-  
թերցողին Ալիշանի Սիսուանում կարդալու, չենք կարող  
չշեշտել մի հանգամանք ևս. մինչդեռ ըստ այս մեր ա-  
ղիւսակի աղբիւրի թէ Հելուիզը և թէ Սիպիլը ջոկ ջոկ  
կոչում են «ղուսարը Հեմրի թագաւորին կիպրոսի», Ալի-  
շանը յայտնում է. «Մեր պատմիչը... համահայր չէ ա-  
սում, սակայն ըստ արևմտեան պատմիչների համահայր  
էին, ինչպէս նշանակեցինք, բայց ոչ համահայր»: Սակայն  
ով կարող է մեզնից պնդել թէ Տիրանի երկու քոյրերը  
համամայր էին, քանի որ ցարդ ասածներից երեաց և շու-  
տով էլ կը տեսնենք, որ մեր Գ. դարու քրիստոնեայ նա-  
խարարներն ու թագաւորները բազմակին էին. և եթէ  
նոյն խոկ ենթագրուի որ Տիրանն ու իւր երկու քոյրերը  
և համահայր չէին, միթէ այսպիսով էլ կը հերքուէր նաւ-  
րաւորութիւնը ամուսնութեան Տիրանի թոռների և իւր  
երկու քոյրերի, կարծում եմ որ ոչ, այլ ճիշտ ընդհակա-  
ռակը. որով ուրեմն և հերքում է ոչ միայն Գուտշմիդի-  
ենթագրութիւնը, այլ և Օրմանեանի «ընական կապակ-  
ցութեան» և «տարիներու անյարմարութեան» առաջկու-  
թիւնը:

Մենք կարող ենք այժմ աւելի ևս հեռուն դնալ և  
աւելին պնդել. այն է որ մէկը կարող է ոչ միայն իւր  
պապ-տատի, այլ և սոցա հօր քոյր-եղբօրը հասնել: Եթէ  
մի 60 տարեկան պապ-տատ կարող են ունենալ 15 տա-  
րեկան ծոռ, ինչպէս տեսանք վերևի աղիւսակում, նոյն  
պապ-տատը նոյն տարիքում՝ 60 տարեկան հասակում—  
մենք տեսանք վերև որ այս տարիքում ևս կնոջ ծննդա-  
րերութիւն պատահում է—կարող են ունենալ մինչև 30:

տարեկան քոյր-եղբայր—որդեծնութեան տևողութիւնը, այն է սկիզբը և վերջը, 15 և 45 տարիների տարբերութիւնը—որ չի երեսում վերկի աղիւսակում, ի հարկէ աւելի մեծերն էլ կունենան, և միթէ 15 տարեկանը չի հասնիլ 30 տարեկանի և կամ հենց աւելի հասակաւորի, այն էլ բազմակնութեան շրջանում, չմոռանանք շահերի, սուլթանների, ուրեմն և հայոց արքաների և նախարարութեան կանանոցի կարգերը։ Ահա այդ տախտակը

Ծառական	1	2	3	4	5
	8	ա	ր	ի	ք
Ա.	15				
Բ.	30	15—1			
Գ.	45	30—15—1	15—1		
Դ.	60	45—30—15—1	30—15—1		
Ե.	75	60—45—30—[15—1]	45—30—15—1	30—15—1	15—1

Այսպիսով ամուսինները 75 տարեկան հասակում [Ե 1] կարող են ունենալ 60—45—30 տարեկան զաւակներ և թերեւ մինչև 15 տարեկան, եթէ ի նկատի առնենք որ կնոջ որդեծնութեան շրջանը երբեմն աւելի երկար է տևում, քան մեր ընդունած միջին չափը 45 տարեկանը, բայց այս բացառիկ դէպքեր համարելով 15 տարեկանը վակագծի մէջ առանք [Ե 2]: Ալդ այս աղիւսակի 15 տարեկանը [Ե 5] կարող է հասնել եթէ ոչ 60—45, գէթ 30 տարեկանի [Ե 2]. ուրեմն իւր պապ-տատի քոյր-եղբօրը: Եւ այս աւելի հաւանական կը գառնայ, երբ տղամարդը [Ա. 1] մի երկրորդ երիտասարդ կին առնի իւր 30—45 տարեկան հասակում [Բ 2 և կամ Գ 2] – միննոյն է լինի

այդ իւր առաջին կնոջ մահից յետոյ թէ կենդանութեան ժամանակ ըստ բազմակնութեան օրէնքի:

Այսպիսի օրինակները անշուշտ հաղուազիւտ են, ինչպէս պնդում է հանգուցեալ Արիստակէս եպիսկոպոսը<sup>1</sup> առարկելով Վահան վարդապետ Քաստամեանին, բայց ինդիրն այդ չէ, այլ հնարաւորութիւնը, գոնեայ այս դէպքում։ և մենք կարծում ենք որ այդպիսի մի հաղուազիւտ օրինակ կայ Դ. Պարի վերջին քառորդում Մամիկոնենց և հայրապետական տան մէջ, այն է Համազասպ Մամիկոնեանի և Սահակ Պարթիի դուստր Անականուշի ամուսնութիւնը։

Նախ՝ ով է այս Համազասպը։ Փարպեցու և Խորենացու վկայութեամբ սա է Մամիկոնեանց «տէր և սպարապետ»<sup>2</sup> Հայոց թագաւոր Վոամշապուհի ժամանակ և հայր Ա. Վարդանայ, Հմայեակի և Համազասպ-Համազասպեանի<sup>3</sup> և մեռել է Շապուհ Պարսկի Հայոց թագաւորելուց<sup>4</sup> 416 թուականից առաջ<sup>4</sup>, Նոյնին է ասում և Մեսրոպ Երէցը, բայց սա զիտի, թէ ով էր նորա հայրը, երկիցս յայտնելով՝ թէ Համազասպ էր «որդի Մանուէլի»<sup>5</sup>, որ վերոյիշեալ պատմազիրները չեն յիշատակում։ Արդ Մ. Երէցի բնագիրը, կարծես թէ այդ տեղում խանդարուած է<sup>6</sup>, իսկ մեզ յայտնի առաջին տպագրութիւնը և Մայր Աթոռի ձեռագիր Մ. Երէցի խմբագրութեանց ընդարձակ օրինակները այդտեղում չունեն Մանուէլի անունը<sup>7</sup>, ինչպէս և Բուզանդարանը, որ Մ. Երէցի գլխաւոր աղբիւրն է, բայց

1. Ամուսնական խնդիրներ, Դ, էջ 80, ծանօթ, 14. Մոսկա 1891,

2. Դ. Փարպ. Ա., ԺԸ, 37:

3. Խորեն. Գ, ծա, 242—244, ԺԸ, 255—256, Վենետիկ 1865:

4. Խորեն. Գ, ծե, 249:

5. Սոփերք Հայկ. Զ, ԺԵ, 123:

6. Անդ, էջ 146:

7. Պատմութիւն Մնացորդաց Հայոց և Վրաց, ժա, էջ 135.

Մադրաս 1775: Մայր Աթոռի մեզ յայտնի ընդարձակ խմբագրուտեան ամենանին ձեռագիրը, թիւ 1753 [Կարինեան ցուցակ №

պէտք է ասել որ Բուզանդի այդ համապատասխան զլուխը թեթևակի առնելով կարդացողը, որտեղ վերջին անգամ յիշում է Համազասպեան-Համազասպէ-Համազասպ անունը Մանուէլի որդիներից յետոյ<sup>1</sup>, կարող է կարծել, որ Համազասպը Մանուէլի որդին է:

Սակայն Մ. Երէցի թէ համառօտ և թէ ընդարձակ խմբագրութիւնը յայտնում են, որ «Մանուէլն ու Կոնը... Վասակ Մամիկոնեանի որդիքն էին»<sup>2</sup>, կամ որ միենոյնն է «Մուշեղի եղբայրները»<sup>3</sup>. միենոյն թեթևութեամբ, ինչպէս վերեսում: Վերջին վկայութիւնը Մ. Երէցի ծագում է անշուշտ Բուզանդից, ուր Մանուէլը մի տեղում Վարազդատին դիմելով Մուշեղին կոչում է «Եղբայր իմ»<sup>4</sup>, ինչպէս և կրկնելով նոյնը կարծես թէ աւելի ևս հաստատում է: Բայց մեզ թուում է, որ այդ ընդհանուր մերձաւոր ազգականի մաքով է՝ զեռ այսօր արևելքում, մանաւանդ հայոց մէջ, գիւղերում մօտ արիւնակիցներին, մանաւանդ հօրեղբօր որդոց եղբայր են կոչում, ինչպէս հօրեղբօր աղջիկներին քոյր: Հէնց այսպէս էլ եղած պիտի լինի և ՚ի. դարում, քանի որ ուրացող Մեհրուժան Արծրունու համար անգամ Հայոց բանակում ասում են. «Դա մեր եղբայր է»<sup>5</sup>: Եւ եթէ խակապէս Մուշեղը Մանուէլի եղբայրը լինէր, միթէ Մանուէլը Վարազդատին կասէր «Վասակ հայը Մուշեղայ»<sup>6</sup> և չէր ասիլ «հայը իմ»: Բացի

1712, որի նկարագրութիւնը տես Ազաթանգեղոս առաջաբան § 30, էջ խղ—խե, Տփղիս=Վաղարշապատ 1909] այդ տեղը չունի, ինչպէս և մի այլ ջր. որի համարը դժբախտաբար մոռացել եմ նշանակելու:

1. Բուզ. Ե, լէ, 245—251:
2. Առփերք Հայկ. Զ, ժե, 119:
3. Պատմ. Մնացորդաց ժա, 133:
4. Բուզ. Ե, լէ, էջ 247, հմմտ. 248:
5. Բուզ. Ե, խզ, 263: Հաւանօրէն Պապի Վապի Վարազդատի կողմից «հօրեղբայր» կոչուելն էլ խական մտքով չէ (Բուզ. Ե, լէ, 248), այլ եղբայր բառի պէս փոխարերական կամ ընդարձակ մտքով է, ինչպէս այժմ էլ սովորութիւն է, թէ չէ Վարազդատին Մուշեղի դէմ զբանողներն էլ այդ կասէլին (Բուզ. Ե, լե, 243):
6. Բուզ. Ե, լե, 247:

այդ համարեա ժամանակակից Բուզանդարանում Մանուէլը կոչւում է «որդի Արտաշինայ» միևնոյն զլխում քիչ վերի, որ աւելի հաւանական է դառնում և այն պատճառաւ, որ Մանուէլի որդին և յաջորդը Արտաշէս-Արտաշիրը իւր պասի անունով է կոչւում<sup>1</sup>. ինչպէս սովորական է թէ մեր պատմութեան, թէ մեր Զոջանց ու Քաջանց տան վեպերում և թէ այժմ ևս ժողովրդի մէջ: Այսպիսով ուրեմն ոչ Մանուէլի հայրն է Վասակը և ոչ էլ Մանուէլի որդին Համազասպը:

Ո՞վ է ուրեմն այս Համազասպեան-Համազասպէ-Համազասպի<sup>2</sup> հայրը:—Մենք գիտենք արդէն Բուզանդարանի

1. Բուզ. Ե, խղ, 264: Գաթըրճեանը Արտաշիրն ու Արտաշէսը ջոկ ջոկ անձն է համարում (Տիեզերական պատմ. հատոր Բ. էջ 608, տախտակ), սակայն այդ միևնոյն անձն է, ճիշտ ինչպէս մեր վերջին Արշակունի թագաւոր Արտաշէս-Արտաշիրը (Խորեն. Գ, ծը, 255—256 ևն): Վերջին ձեզ պարսկական է հմմտ. H. Hübschmann, Armenische Grammatik:

2. Բուզ. Ե, լէ, էջ 249—250 յիշում է 1 անգամ Համազասպ, 1 անգամ Համազասպէ, բայց 6 անգամ Համազասպեան: Համազասպէ ձեզ յունարէնի աղղեցութեամբ պէտք է բացատրել, այսպէս էլ Սուփիանէ, Պետրէ, և ժողովուրդն ունի Յովէ. այսպէս էլ կայ Դատար, Դատարէ, Դատարէն (Բուզ. Գ, ը, էջ 19—20 հմմտ. Խորեն. Բ. կը, 140 սխալմամբ Դատարէ), են վերջաւորութիւնը փաղաքշական է, որ 5 անգամ է գործածուած, աւելի տարածուած է և միակ ընդունուածը գրականութեան մէջ. և նոյն իսկ ժողովրդական վէպում և երգերում, ուր դարձել է Դիտափ (Զոջանց տան, երեք փոփոխակ, էջ ժղ, Վաղարշապատ 1910): Ե. դարում կայ միայն Համազասպեան և Համազասպ ձեզ. Ա. Վարդանի կրտսեր եղբայրն է Համազասպեան [Ղ. Փարպ. Ա, ծը, 37. Բ, լթ, 72 (Հմմտ. Եղիշէ, Զ, էջ 182, Թէոդոսիա 1801) և Խորեն. Գ, ծը, 256. Բ, խէ, 86 Տփղիս-էջմիածին 1904]: Կամ Համազասպ [Ղ. Փարպ. Բ, լ, 58 (Հմմտ. Եղիշէ, Ը, 310)]: Փարպեցին և Խորենացին Վարդանի հօր անունը միայն Համազասպ ձեռվ են յիշում, երկի իւր որդուց տարբերելու համար: Սյնուհետև էլ մեր բոլոր պատմափիրները, թերևս բացի Ա. Վարդանի հօր և եղբօր անունից, իրու արդէն յայտնի և պատճական, միայն Համազասպ ձեն ունին, սոյնպէս արձանագրութիւնները, գրաւոր յիշատակարանները, ինչպէս և ժողովուրդը այսօր միայն Համազասպ ձեզ գիտեն:

Քոյրաթիւ բառի ճիշտ բացատրութեամբ, որ Համազասպը Վարդանի և Վասակի հարազատ եղբայրն էր, որոնց հարազատ այսինքն և համահայր քոյրն էր Համազասպուհին, իոկ խորթ, այսինքն համահայր, բայց ոչ համամայր եղբայրը ուրացող Վահանը<sup>1</sup>, ուրեմն Արտաւազդ Մամիկոնեանն է մեր Համազասպի հայրը։ Արդ այս Համազասպը, որ իւր բոլոր եղբայրներից և նոյն իսկ եղբայր՝ Վասակի որդուց՝ այն է Մուշեղից յետոյ է պատմութեան մէջ հանդէս գալիս Վարազդատի թագաւորութեան վերջին տարին, կոչում է «Սեպուհ մի Մամիկոնեան տոհմէն»։ Անշուշտ Համազասպը փոքր էր ոչ միայն Վաչէից ու սորա յաջորդ Մանուէլից, այլ և աւելի ևս փոքր էր քան Մանուէլի հաւանօրէն աւագ որդի Հմայեակը և կրտսերն ու յաջորդը՝ Արտաշէս—Արտաշիրը, ապա թէ ոչ «ըստ կարգի» Համազասպը պիտի լինէր զոցանից առաջ «տանուտէր—նահապետ» Մամիկոնեանց և սպարապետ զօրավարութեան»<sup>2</sup>։

1. Բուզ. Դ, ծթ, 183. Ե, լէ, 245—250։

2. Բուզ. Ե, լէ, 245—247։ Սպարապետութիւնը կապուած չի եղել Մամիկոնեան «նահապետութեան» հետ։ ով ցեղի մէջ աւագ էր, նա էր գառնում «նահապետ կամ տանուտէր» այդ պատճառով էլ «Վաչէ նահապետի» տեղն անցաւ Մանուէլը. և յետոյ բռնութեամբ «առանց թագաւորի հրամանի» յափշտակեց զօրավարութիւնը, և երեկ իրեւ «փոխանակ թագաւորի» (Ե, լէ 251). Հմմտ. Ե, լը, 252—253) տուաւ իւր որդի Արտաշէս—Արտաշիրին «իւր, այն է Մամիկոնեանց, տէրութիւնը ու զօրավարութեան սպարապետութիւնը» (Ե, խղ, 264). Այսպէս էլ Վաչէի որդի փոքրանասակ Արտաւազդի գլուխը զրին տանեւտէրութեան պատիւը և սպարապետութիւնը թագաւորի առաջ» (Դ, ժա, 28). Բայց սպարապետութիւնը «նահապետութեան հետ մի անձի տալը կարծես կտիսուած է եղել թագաւորից. որովհետև մի ուրիշ դէպօւմ թագաւորը բաժանում է այդ պաշտօնները։ Այսպէս Արշակ Բ—ի համար ասում է Բուզանդը «Եւ կացուց արքան երէց եղբայր Վարդանին նորանց, այսինքն Մամիկոնեանց, ցեղի նահապետ, և Վասակին, նորա միջնեկ եղբօրը, իւր գայեակին զօրավարութեան սպարապետ . . . սոյնպէս կրտսերին զօրապետ կացուց» (Դ, ը, 67)։ Այս կրտսերը արդեօք Բագրան էր «Վասակի եղբայրը» (Դ, իր, 42) թէ Վահան ուրացողը, Մամուէլի հայրը։

իսկ Համագասպը հազիւ Վոամշալուհի ժամանակ Սահակ Պարթեի միջնորդութեամբ և այն էլ Շալուհի հրամանով միայն ստանում է «սպարապետութիւնը» առանձին հրովարտակով, որի պատճառն էլ պարզ է, եթէ ժամանակի բաղաքական հանդամանքներն ու Մամիկոնեանց դիրքը Պարսկաստանի վերաբերութեամբ մի վայրկեան աչքի առաջ ունենանք և յիշենք Պարսից հակառակորդ Պասակի, Սամուելի, Մանուելի և այլոց գործերը:

Այս բոլոր պրալտումներից յետոյ՝ այլ ևս դիւրին չէ հասկանալ և այն սխալը, որ սպրդել է Մեսրոպ Երէցի տպագրուած ընդարձակ՝ խմբագրութեան մէջ, որով այս «Համագասպը . . . Քրիստոսի նահատակ Ս. Վարդանայ հայր»ը կոչուած է Մանուէլի «եղրօր Մուշեղի որդի»<sup>2</sup>:

Մենք տեսանք որ Մ. Երէցի համառօտ տպագրուած խմբագրութեան մէջ Համագասպին նախ փորձել են դարձնել Մանուէլի որդի, որ հերքուեց ընդարձակ Մ. Երէցով. յետոյ էլ ըստ Երկու խմբագրութեանց ևս Մանուէլը դարձաւ Վասակի որդի, ուրեմն և Մուշեղի եղբայր, մինչդեռ մենք տեսանք որ ըստ ժամանակից Բուղանդարանի Մանուէլն Արտաշէսի որդին էր. Ոչ Փարավեցին և ոչ էլ Խորենացին, որից ևս շատ է օգտառւմ Մ. Երէցը, այսպիսի կոռւան չեն տալիս, ուստի մեզ թուում է, որ Մ. Երէցն ինքը, «Ծաղկաքաղ» արողը և կամ խմբագրողը չեն կարողացել հասկանալ Բուղանդարանի «քոյրաթիւ» բառի խոկականնշանակութիւնը, որ հազիւ այժմ Քաջանց վէպի օգնութեամբ պարզում է, ուստի ընկել է հակառական ենթադրութեանց մէջ և Վասակի ամենակըսեր ու հարազատ եղբօրը վերջիվերջոյ դարձել է նորա որդի և թոռ. Արդեօք այս գէպքում նա ևս Օրմանեան սրբազանի պէս «բնական կապակցութեան» և կամ «տարիներու անյարմարութեան» հաշիւներ էլ արել է, անհաւանական չէ, եթէ ի նկատի

1. Խորեն. Գ, ծա, 242—244:

2. Պատմ. Մնացորդաց ժա, 133, 135. Զեռագիր Մայր Աթոռի № . , թղ. 99<sup>թ</sup>.

առնենք, որ հէսց այս տեղ Մ. Երեցի ընդարձակ խմբագրութեան տպագիրը, բայց ոչ ձեռագիրը ասում է թէ Համազասպը «Մուշեղի որդին անկատար հասակաւ» էր, որին «փախցրին Տայք», ուր «զարգանում էր»։ Եւ ուրեմն Ս. Վարդանայ հայր Համազասպը է և մնում է Վարդանի, վասակի և Համազասպունու հարազատ և ուրացող Վահանի խորթ, այսինքն համահայր, բայց ոչ համամայր եղբայրը<sup>1</sup>։

1. 2. Փարպեցին մըրկան տարագրուած ութ քահանաների հետ յիշում է շղթայակապ երեսուն երեք նախարարներից անուն երեսուն և մէկ հոգի, որոնցից «ի տոհմէն Մամիկոնէից Համազասպնան և Համազասպ և Արտաւազդ և Մուշեղ» (Բ, խէ, էջ 86)։ Մենք վերել տեսանք, որ Փ. Բուզանդը միենոյն անունն ունէր անխոտիր վեց անգամ Համազասպեան, մի անգամ Համազասպէ [ի, սեռական] և մի անգամ Համազասպ (Բուզ. Ե, լէ, էջ 249—250)։ Մենք ասացինք, որ այդ պէտք է լինի Ս. Վարդանի հայրը, որ Փարպեցին Համազասպ[այ] է կոչում (Ա, ժը, էջ 37), ինչպէս և Խորենացին ևս հինգ անգամ Համազասպ[այ]. Գ, ծա, 242—243, ծե, 249։ Արդ Ս. Վարդան զօրավարի հօր այս Համազասպեան—Համազասպի որդուն, վարդանի կըտսերադոյն եղբօրը Խորենացին կոչում է, թէև միայն մի անգամ, Համազասպեան (Գ, ծը, 256), ինչպէս և Փարպեցին բացի վերոյիշեալ առաջին վկայութիւնից երկու անգամ ևս Համազասպեան (Ա, ժը, էջ 37. Բ, լթ, 72), իսկ մի անգամ ևս Համազասպ[այ]. Բ, լ, 58), չնայելով որ նա պէտք է այդ անունները տարբերէր, երբ միաժամանակ վերեկ օրինակում ունի և Համազասպեան և Համազասպ։ Անտարակոյս Եղիշէի յիշած Համազասպեանը և Համազասպը տարբեր անձեր են, որոնցից և ոչ մէկը չէ կարող լինել Վարդանի հայրը, որ մեռել էր Շապուհ Պարսկի թագաւորութիւնից 416—417 թուականից առաջ (Խորեն. Գ, ծե, էջ 249), այլ եղբայրը։ Այս երկուսից Համազասպը, որ բոլոր միւս նախարարների հետ Պերսկի թագաւորութեան վեցերորդ տարին վերադարձաւ Հայաստան (Ղ. Փարպ. Գ, կը, էջ 110) Ե. Ղ. Փարպեցու թղթի առաջաբանում—որ ի հարկէ Փարպեցունը չէ—յիշուած ոմնէ և պատուական նտիսարար Համազասպը (էջ 186), որ միենոյն թղթում յիշուած Համազասպն է (էջ 195) ի հարկէ, ինչպէս որ թեթէ համեմատութիւնն իսկ ցոյց կըտայ։ Այս ենթադրութիւնն աւելի ոյժ է ստանում չնորհիւ այն հանգամանքի ևս, որ

Այժմ տեսնենք ս. Սահակի դուստր Սահականուշի ծագումը, Ո՞վ էր ս. Սահակի կինը, մեզ յայտնի չէ պատմագրութիւնից, բայց նորա մայրը, Ներսէս Մեծի կինը «Սանդուխնտն էր Մամիկոնեան... ազգից . . . և սորա հայրը Վարդան Մամիկոն»<sup>1</sup>:

Արդ պատութեան այս շրջանում կան երկու Մամիկոնեան Վարդան, հայր և որդի. Վասակ սպարապետի անդրանիկ եղբայրը և Մամիկոնեանց նահապետը, Քաջանց վէպի «Քաջ Վարդանը» (№ 3), և սորա որդին՝ Հօրն սպանեց Արշակ Բ.-ի հրամանով Վասակը, իւր հարազատ եղբայրը, որից յետոյ ծնուեց որդին, ուրեմն մի յետամնայ՝ postumus<sup>2</sup>. Այս Վարդան «Մանուկը», Քաջանց վէպի «Վասրէկ Վարդանը» (№ 2), որ Ներսէսի կաթուղիկոսութեան ժամանակ ծնուեց, չէր կարող ի հարկէ այն տարիի դուստր ունենալ, որ Ներսէսին կին լինէր. կը մնայ ուրեմն սոցա հայրը, որ կարող էր այդ միջոցին հասած դուստր ունենալ: Վարդանն ուրեմն Ներսէսի աներն էր—մի նոր հանգամանք ևս Ներսէս Մեծի և Արշակ Բ.-ի ընդհարումները հասկանալու—և Սահականուշի տատի հայրը, իսկ Համազասպը ինչպէս զիտենը, Վարդանի, Վասակի, Վահան Ռւբացողի և Համազասպուհու կրտսեր եղբայրը, ուրեմն Սահականուշի տատի հօր՝ Վարդանի, այսինքն Սահականուշի մօրական մեծ պապի, եղբայրը:

Մինչդեռ Ներսէս Մեծը ըստ Մեսրոպ Երէցի իւր ինոյ հետ երեք տարի կեսարիայում ապրելուց և սորա մահից յետոյ դալով Հայաստան՝ դառնում է Արշակ Բ.-ի աենեկապետ, ըստ Մ. Խորենացու նա կեսարիայից գնում է Բիւզանդիոն «Առնուլ կին զդուստր Ասպիոնայ որումն

Փարպեցին առհասարակ մօտ է եղել Վականից վերադարձող նախարարներին, յատկապէս Արշաւիր Կամսարականին (Բ, ծհ. 101. ծը, 104—105) և այս Համազասպին, որ, ինչպէս թղթի առաջարանում էլ յատկապէս ասուած է, Մամիկոնեան է:

1. Սովերք Հայկ. Բ, էջ 14: Պատմ. Մնացորդաց Հայոց, Ա, 57:

2. Բուզ. Դ, ծը, 131—132:

իշխանի մեծից<sup>1</sup>: Եւ որովհետեւ Մ. Խորենացին ոչինչ չի յիշատակում Մ. Երէցի այս պատմածի մասին, իսկ մի այլ տեղում ո. Սահակի համար ասում է «Որդի մեծին Ներսեսի»<sup>2</sup>, ուստի Խորենացուց, կարծէս, հետեւում է, որ Ներսէս մեծի կինը, ուրեմն ո. Սահակի մայրը, ոչ միայն Մամիկոնեան չէ, այլև գուցէ և հայ չէ: Մ. Խորենացու աւանդածր Մ. Երէցի հետ համեմատելուս թուռում է, որ Ասպիոնի դուստրը Ներսէսի երկրորդ կինը եղած լինի, որից և կը հետեւէր, որ Ներսէսը կամ երկին էր— որ շատ հաւանական է, մանաւանդ որ տակաւին աշխարհ հական էր—և կամ երկրորդ անդամ ամուսնացած իւր առաջին կնոջ մահից յետոյ: Այսպէս թէ այնպէս, եթէ Ներսէսը իւր առաջին կնոջ մահից յետոյ կին առած լինի Ասպիոնի դուստրը, ապա ուրեմն անորոշ կը մնայ, թէ այս երկու կնոջից ո՞րն է ո. Սահակի մայրը:

Սակայն ինձ թուռում է, որ դժոնեա ո. Սահակի մօք խնդրի վերաբերութեամբ աւելի հաւանական է Մ. Երէցի վկայութիւնը: Եւ ահա թէ ինչու նախ Մ. Խորենացու խօսքն անորոշ է, արդեօք Ներսէսը վերջիվերջոյ Ասպիոնի դուստրը կին առել է, թէ ոչ. և ապա Ասպիոնի, անուան նայելով, հայ լինելը տարակուսական է. իսկ յոյն լինելու դէպքում անհաւանական է օտար ամուսնութիւնը զրադաշտականութիւնից նորադարձ հայ ազատանու՝ և նուիրապետութեան համար: Միւս կողմից մոռանալու չէ որ զրադաշտական մերձամուսնութիւնը, բացի հայոց արքաների բաղաքական օտար ամուսնութեանց դէպքերից, ոչ միայն Դ. այլ և տակաւին Ե. տարում տեսում էր, ինչպէս կարելի է համարձակ եզրակացնել Աշտիշատի և Շահապիվանի ժողովների որոշումներից: Այսպիսով միայն մասամբ պարզում է արքայական, հայրապետական տան և Մամիկոնեանց մտերմութիւնը, ուստի և հասկանալի Համազասպի և Սահականուշի ամուսնութիւնը: Վերջապէս շեշ-

1. Խորեն. Գ, Ժ, 202:

2. Անդ. Գ, Խթ.

տելու է և այն պարագան որ Մ. Երէցն աւելի հանդամանօրէն է պատմում, զիտէ Ներսէսի աներոջ ու կնոջ անսւնը, աղգանսունը, վերջինիս մահը, թաղումը ևս Ահա այս ձիւղագրութիւնը. որով մեր բուն խնդիրն ըստ էռթեան չի փոխւում:

Առաջին կին=Երտաւաղդ Մամիկոն. =Բ. կին

Վարդան Կասակ Համազասպունի Վահան  
Սանդուխտ=Ներսէս Մեծ=Դ. Ասպիոնի

Վահակ Պարթե

Սահականուշ = Համազասպ

Ստեփան Կանայեանց.

(Ճարունակելի)

